

## Հուսին ՊԵՏՐՈՎԱՆ

### ԵՐՎԱՆԴՅԱՆ ՄԵԾ ՀԱՅՔԻ ՉՈՐՍ ԾԱՅՐԱՍՍՍԵՐԻ ՀԱՐՁԻ ՇՈՒՐՋ (մթ. ա. IV դարի վերջ)

Հայերի նախահայր Արմենոսի մասին հունական գրույցն ավանդած Կիրսիլոս Փարավացու և Մեղիս Լարիսացու երկը մեզ չի հասել, բայց դրա երբեմնի գոյությունը հաստատվում է հետագա մատենագիրների՝ դրան կատարած հղումների միջոցով։ Դրանցից համեմատարար ծավալուն են հոյն նշանավոր աշխարհագետ Ստրաբոնի կատարածները։ Արմենոսի առնչությամբ նրա երկու կարդում ենք (մեջքերում ենք կրծատումներով)։ 1. «Ասում են թե, Յատնը թեսալացի Արմենոսի հետ դեպի Կողքին նավարկության ժամանակ առաջացել է մինչև Կասպից ծով և անցել է Վրաստանը, Աղվանքը և Հայաստանի ու Մարաստանի շատ մասը... Ասում են նաև թե Արմենոսը Արմենիոն քաղաքից էր, որը գտնվում է Բոյքես լճի մոտ՝ Ֆերեսի և Լարիսայի միջև, թե իր հետ եղողներն ել բնակեցան Ակիլիսեն և Սուսպիրիտիս՝ մինչև Կալարեն և Աղիարեն.՝ աս է, որ իր անունը բռնել է Հայաստանին».<sup>1</sup> 2. «Սիս մի իմ ավանդություն այս ազգի մասին։ Արմենոսը, Թեսալիայի Արմենիոն քաղաքից, որ գտնվում է Ֆերեսի և Լարիսայի միջև, Բոյքեյի վրա, ինչպես ասացինք, Յատնի հետ արշավեց Հայաստան։ Սրա անոնով է [երկիրը] կոչվում Արմենիա, ինչպես ասում են Փարավացին Կիրսիլոս և Լարիսացին Մեղիս՝ երկուսն ել զինակից Ալեքսանդրի։ Նաև թե Արմենոսի հետ եղողները բնակեցան Եկեղիք, որ նախապես ծովաց [իշխանության] տակ էր, մյուսները Սիսպիրիտիսում մինչև Կալարեն և Աղիարեն, Հայաստանի սահմաններից դուրս».<sup>2</sup> 3. «Մարաստանի մասին խոսելիս, մենք խոսել ենք նաև Մեղեայի մասին. այս բոլորից երեսում է, որ մարերը և հայերը ցեղակից են թեսալացոց՝ Յատնի և Մեղեայի գծով»։<sup>3</sup>

Ստրաբոնի երկից կատարված այս մեջքերումներում արտացոլված են ինչպես Ալեքսանդր Սակելրոնացու հիշյալ թեսալացի զինվորականների առաջադրած կեղծ «վարկածը» Արմենոսի և հայերի թեսալական ծագման մասին, այնպես էլ Հայաստան իրենց աշքերով տեսած մարդկանց՝ նոյն այդ զինվորականների հաղորդած ստույգ տեղեկությունները մթ.ա. IV-րդ վերջին տասնամյակների Հայաստանի մասին։ Դրանց վերաբերյալ դիտարկումներ է կատարել Ն. Արքոնցը։

Կիրսիլոս Փարավացու և Մեղիս Լարիսացու հաղորդումների այն մասը, որը վերաբերում է Հայաստան երկրին, պետք է արժանահավատ համարել, որովհետև «Նրանք ճանաչում են երկրի սրբավայրերը, շրջանները՝ Ուխտիան, Ակիլիսեն, Սոֆեն, Արաք գետը, Արաքսեն և եռվիտը և նրա երկրաբանական անցյալը»,- գրում է նաև, որ Կիրսիլոսն ու Մեղիսը Հայաստանում անձանք են հավաքել այս տեղեկությունները, պետք է դրան հավատարի։<sup>4</sup> Ն. Արքոնցը նաև փորձում է կրահել թեսալական այս սպաների Հայաստանում հայտնվելու ժամանակն ու հանգամանքները։ Նա գրում է. «Այդ ժամանակ Հայաստանում իշխում էր Արտանը (Արտան, Երտան).... Գուցե Եվմենսի օրինակով Անտիգոնոս ուզեցել է իր կողմը գրավել Արուանին նախատեսելով 301 թվականի մեծ ճակատամարտը։ Այդ նպատակով էլ, գուցե Հայաստան է ուղարկել Կիրսիլոսին և Մեղիսին։ Չուտ ենթադրություն, որ բիսում է քաղաքական դրությունից»։<sup>5</sup>

Մեզ բոլոր ենք տալիս անելու մեկ ուրիշ ենթադրություն՝ իմք ընդունելով այն իրողությունները, որ «Կիրսիլոսը անձանք դեմք է, որը ոչ մի տեղ այլև երևան չի գալիս», խակ Ալեքսանդր Սակելրոնացու վերջին խնջույքի հյուրընկալ թեսալացի Մեղիսի և հիշյալ Մեղիս Լարիսացու նոյնությունը ապացուցել ենարակոր չէ։<sup>6</sup>

Ալեքսանդր Սակելրոնացու այս սպաների հետագայում այլևս հիշատակված չիմելու հանգամանքը բերևս բացատրվում է նրանով, որ սրանք, լինելով Հայաստան

<sup>1</sup> Strab. XI, 4, 9 Ստրաբոն, Քաղեց և քարզամեց Հր. Աճառյան, Եր., 1940, էջ 33:

<sup>2</sup> Նոյն տեղում, XI, 14, 12, էջ 61-63:

<sup>3</sup> Նոյն տեղում, XI, 14, 14, էջ 65:

<sup>4</sup> Ն. Աղոնց, Հայաստանի պատմություն, Եր., 1972, էջ 322-323:

<sup>5</sup> Նոյն է:

<sup>6</sup> Նոյն է:

Աերխուժած Մենոնի հունա-մակեդոնական զորամասի կազմում, գերի էին ընկել և զոնե ինչ-ոք ժամանակ մնացել Հայաստանում։ Եթե Մենոնի մասին Ստրաբոնը որոշ տեղեկություն ունի, ապա նրա զորամասի ճակատազրի մասին որևէ բան չի հաղորդում։ Ընդ որում, Մենոնի մասին նաև խոսում է Հայաստանի ոսկու կապակցությամբ։ Նա գրում է. «Կան ոսկու հանքեր Միսավիրիտիսի մեջ՝ Կարավայում, ուր ուղարկվեց Մենոնը Ալեքսանդրի կողմից զորքով, բայց խեղաման եղավ բնակչների կողմից»։<sup>7</sup>

Արմենոսի առնչությամբ Ստրաբոնի ներկայացրած Արմենիա // Հայաստանն իր դարաշրջանի Հայաստանը չէ, որը, Փոքր Հայքը բացառելու դեպքում անգամ, սկսվելով Ակիլիսենեից (արևմուտքում) հասնում էր մինչև Կասպից ծով (արևելքում),<sup>8</sup> որի ափին ևս, ըստ նույն Ստրաբոնի, հայեր էին բնակվում։<sup>9</sup> Այն նաև Հերոդոտոսի դարաշրջանի (մ.թ.ա. V դար) Հայաստանը չէ, որի արևմտյան սահմանները անցնում էին Ակիլիսենեից հասնելով մինչև Կիրիկիա և Սև ծով։<sup>10</sup>

Արմենոսի առնչությամբ ներկայացված Արմենիա // Հայաստանը երեւ Ստրաբոնի և Հերոդոտոսի դարաշրջանների Հայաստանը չէ, ապա այն կարող էր լինել Կիրսիլոսի և Ստեփիոսի ժամանակաշրջանի Հայաստանը։ Իսկ որ դա հենց այդպես է, պարզվում է թեկուզ այն սահմաններից, որ թեսալացի այդ սպաները գծում են նրա հանձը։ Օրինակ, ըստ նրանց, Հայաստանի սահմանը արևմուտքում կազմում էր Ակիլիսենեն, իսկ այդպիսի վիճակ կարող էր ստեղծվել միայն այն բանից հետո, եթե Հայաստանի անկախությունը (և, ըստ երևույթին, միասնությունը) Վերականգնած Օրոնտես // Երվանդից հունամակեդոնական նվաճողները խել էին երկրի անդրեվիրատյան տարածքը և ընդոգկել էին իրենց ենթակա Կապադովյան սատրապության մեջ։ Ինչպես Հ. Մանանցանն է գրում. «Սևգրնաղբյուրների որոշ ակնարկներից դժվար չէ կրահել, որ Փոքր Հայքը... արևելյան մասն էր Եվմենեաին տրված Կապադովյան սատրապության»,<sup>11</sup> բայց ոչ ամբողջությամբ, այլ միայն իր անդրեվիրատյան մասով, որովհետև «այսրեվիրատյան արմենական երկրները՝ բուն Հայաստանը, մակեդոնացիներից նվաճված չեն և նրանք կառավարվել են տեղական իշխանների ձեռքով»։<sup>12</sup> Կասկած լինել չի կարող, որ այդ «այսրեվիրատյան արմենական երկրների» բվում էր նաև Ակիլիսենեն, որն այսպիսով, ի տարբերություն անդրեվիրատյան հայկական հողերի, գտնվելու էր Մեծ Հայքի կազմում։

Այս տեսանկյունից է հասկանալի դառնում, թե ինչու Կիրսիլոսի և Ստեփիոսի ներկայացրած Արմենիա//Հայաստանը չեր ներառում անդրեվիրատյան հայկական հողերը և սկսվում էր այսրեվիրատյան Ակիլիսենեով։ Ստորև կտեսնենք, որ Կ. Փարավացին և Մ. Լարիացին, իսկապես, գծում են իրենց ժամանակաշրջանի մ.թ.ա. IV դարի վերջին տասնամյակների Մեծ Հայքի սահմանները, որ նրանց իշխատակած չորս երկրամասերը ցոյց են տալիս Հայաստանի սահմաններն ըստ աշխարհի չորս կողմերի։

Կիրսիլոսի և Ստեփիոսի հիշատակած չորս երկրամասերից երկուսը՝ Ակիլիսենեն և Աղիարենեն, ստույգ տեղադրություն ունեն։ Ակիլիսենեն Եկեղիքն է, բայց հնում՝ ներառած նաև հարևան զավանները։<sup>13</sup> Աղիարենեն գտնվում էր հյուսիս-արևելյան Սիցազենքում։ Մեծ և Փոքր Զար գետերի միջև, և կենտրոն ունենք Արքելա (ներկայիս Երբիլը հյուսիսային Իրաքում) քաղաքը։<sup>14</sup> Ինչպես Ստրաբոնն է վկայում. «Աղիարենը մեծավ մասամբ դաշտավայր է, և իրը Բարեկանի մաս է համարվում, թեև ունի իր սեփական իշխանը, ինչպես և կցվել է Հայաստանին։ Սարերը, Հայերը և երրորդ՝ Բարեկացիք, այս կողմերի ազգերից մեծագույնները, սկզբից հարաբերության մեջ էին իրար

<sup>7</sup> *Страбо, XI, 14, 9, էջ 61:*

<sup>8</sup> *Նոյն տեղում, IX, 14, 5, էջ 57, XI, 3, 2, էջ 29:*

<sup>9</sup> *Նոյն տեղում, XI, 7, 1, էջ 35:*

<sup>10</sup> *Негорд, III, 93 և V, 49, Հերոդոտոս, «Պատմություն ինը զրից, քարզմանությունը Մինոն Կրկյաշարյանի, Եր., 1986, էջ 197, 305, քարտեզներ՝ «Держава Ахеменидов в начале V в. до н. э.», «Этническая карта Европы V-IV вв. до н.э. / Всемирная история, т. II, М., 1956.*

<sup>11</sup> *Հ. Մանանցանը առնելու մասին տեսանկյունից հայ ժողովով պատմության, հ. I, Եր., 1944, էջ 94:*

<sup>12</sup> *Նոյն տեղում, էջ 96:*

<sup>13</sup> *Հ. Ա դ օ հ դ, Արմենիա և այլ պատմություններ, Եր., 1971, ստ. 55; Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 50:*

<sup>14</sup> *Հ. Ա դ օ հ դ, Եղված աշխարհ, էջ 227; Ն. Արոնց, Եղված աշխարհ, էջ 325:*

հետ, պատեհ առքիվ հարձակվում էին իրար վրա, հետո բանակցում և նորից հաշտվում»:<sup>15</sup> Սեղբերումից պարզվում է, որ Աղյարենեն ոչ միայն մասնակիորեն հայարձակ է եղել, այլև ժամանակին մասն է կազմել Հայաստանի, ըստ այս, Կիրսիլոսին և Սեղոսին հանգող ստրարոնյան հաղորդումը արմենների «մինչև Կալաքեն և Աղյարեն» տարածված լինելու նասին կարելի է դիտարկել այս երկու տեսանկյուններից ևս: Բայց եթե Աղյարեննի դեպքում Ստրարոնը կարող էր նկատի ունենալ Տիգրան Մեծի (մ.թ.ա. 95-55 թթ.) ժամանակաշրջանը, ապա Կալախենների դեպքում դա բացառվում է, որովհետև Կալախեններ -ն, ի տարրերություն Աղյարենների, անհայտ անուն է այդ ժամանակաշրջանը (և ընդհանրապես Արտաշիսյան հարստության դարաշրջանը) ներկայացրած մյուս մատենագիրներին: Կալախեններ -ն մինչարտաշիսյան ժամանակներից եկող անուն է:

Ստրարոնի երկի հայերին և Հայաստանին վերաբերող հատվածները բարգմանած չեն. Աճառյանը Կալախեննեն համարում է «զավառ Հին Հայաստանի» իհմք ընդունելով հենց Ստրարոնի վկայությունը. «Ստրարոն ասում է, - գրում է նա, - «Հայաստանի սահմաններից դուրս», բայց այս խոսքը Աղյարենի համար պետք է առնել և ոչ Կալաքենի»:<sup>16</sup> Հ. Սանանյանը հունարեն էջու տօն Արμենիակոն օրու բառակապակցությունը բարգմանում է «Հայկական լեռնաշխարհից դուրս»: Ի դեպք, Կալախենների և Աղյարենների միասին հիշատակումը չի նշանակում, թե նրանք անպայման հարևաններ էին լինելու: Միասին են հիշատակված նաև Ակիլիսեննեն և Սյուսպիրիտիսը, բայց դրանք հարևաններ չեն: Մեր կարծիքով, Կալախենների տեղադրությունը կարելի է ճշտել իհմք ընդունելով այն հանգամանքը, որ Ստրարոնի և Մելքոնի վկայության մեջ հիշատակված են եղել Վերջիններիս ժամանակվա Մեծ Հայքի շորս հակադիր երկրամասեր՝ Ակիլիսեններ՝ արևոտքում, Սյուսպիրիտիսը՝ հյուսիս-արևմուտքում, «մինչև Կալախեննեն» արևելքում և «մինչև Աղյարեննեն» հարավ-արևելքում.<sup>17</sup>

Կալախենների տեղադրության հարցի պարզաբանումը սկսենք նրանից, որ սովորաբար այն որոնում են ոչ միայն Հայաստանից, այլև Աղյարեններից էլ հարավ՝ ին Կալախու (այժմ՝ Նիմրու) շրջանում:<sup>18</sup> Բայց Կալախու՝ Ասորեստանի քաջակորների նստավայրերից մեկը, գտնվում էր Հայկական լեռնաշխարհից բավականաշափ հարավ, Տիգրիսի մեջ Մեծ Զար գետի բափելու վայրից ոչ հեռու:

Այսպիսի տեղադրության դեպքում Կալախեննեն խևապես կգտնվեր Աղյարեններից հարավ, իսկ Աղյարեն են՝ նրա և Հայաստանի միջև: Այս դեպքում ի՞նչ միտք կունենար Ստրարոնի կողմից «մինչև Աղյարեննե և Կալաքեննե»-ի վկայակոչումը՝ «մինչև Կալաքեննե»-ի փոխարեն (միբե՞ կարելի է ասել ՀՀ հարավային սահմանն հասնում է «մինչև Գորիս և Ստորի»):

Հ. Սանանյանը Կալախեննեն տեղադրում է Աղյարեններից ոչ քե հարավ, այլ հյուսիս,<sup>20</sup> չնայած իր աշխատության ուղեկցող քարտեզում<sup>21</sup> նրա տեղադրությունը այնային է, որ դարձյալ ընկնում է Աղյարենների հարավ: Կալախենների Աղյարենների հյուսիս տեղադրելու դեպքում ևս ատաջանում է նոյն շփորք՝ ինչու՝ «մինչև Աղյարեննե» ասելու փոխարեն Ստրարոնն ասում է «մինչև Կալաքեննե և Աղյարեննե»: Ուրեմն, Կալախեննեն Աղյարեններից ոչ քե հարավ, այլ հյուսիս էլ գտնվել չէր կարող: Ավելին, կարելի է ասել, որ նա Աղյարեններին ընդհանրապես հարևան չի եղել:

Եթե Ակիլիսեն են Մեծ Հայքի արևմտյան երկրամասն էր, իսկ ինչպես տեսանք դա հենց այդպիս էր, ապա նրան հակադիր Մեծ Հայքի երկրամասը կգտնվեր երկրի արևելքում: Այստեղ հշխած նախարարական տոհմերին Մովսես Խորենացին հանարում է Հայկացն Կաղմոսի և Սիսակի սերունդները: Վերջիններիս շարքն է նա դատում

<sup>15</sup> *Strab o, XVI, 1, 19, էջ 87-89.*

<sup>16</sup> *Սարապոն, էջ 109:*

<sup>17</sup> Հ. Մանանդյան, Աշվարձունություն, հ. 1, էջ 15:

<sup>18</sup> Ն. Աղոնց, Աշվարձունություն, էջ 325: Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. I, Եր., 1971, էջ 245, 534:

<sup>19</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 325, ծան. 25; Հ. Արցոնյան, *Схематическая карта Урарту и сопредельных стран (Топонимика Урарту, Ер., 1985):*

<sup>20</sup> Հ. Մանանդյան, Աշվարձունություն, հ. I, էջ 26, 150.

<sup>21</sup> Նոյն տեղում, էջ 27:

Սյունի, Գողթնեցի, Գարդմանացի, Ծափեացի, Ռւտեացի և Գարգարացի նախարարական տոհմերը, որոնք իշխում էին Արաքս գետից հյուսիս՝ մինչև Կոր գետ ձգված տարածքներում:<sup>22</sup> Ուրեմն, նրանց հարևան Կաղմանները՝ Հայկի քո Կաղմոսի սերունդները,<sup>23</sup> տեղորոշվելու են Արաքսից հարավ ընկած շրջաններում՝ հետագա Պարսպատունիքը ներառյալ: Այս շրջանների հճագոյն Հայաստանի մասն համարվելու և հայաբնակ լինելու մասին վկայում են արաքսագիր հեղինակների հաղորդումները: Արդ ալ-Ռաշիդ ալ-Քաղուզին Աստրապատականի առքիվ հաղորդում է. «Այնուղղ Արդարի մոտ է Սավալան լեռը. դա աշխարհի մեծագոյն լեռներից է... Սարգարեկի լսութերով հաղորդում են]: Քող Ալլահը նրան օրինի և թող ողջունի, որ Արմինիայի և Աղքեցանի միջև կա Սավալան կոչված լեռը: Նրա վրա է գտնվում դրախտի աղբյուրներից մեկը, ինչպես [նաև] մարզարեներից մեկի գերեզմանը և նրա շուրջ տաք աղբյուրներ, որտեղ գալիս են հիվանդները: Զյունը նրա գագարից չի վերանում ոչ ամունը, ոչ էլ ճմռանը»:<sup>24</sup>

Ինչպես տեսնում ենք, Սավալան // Սարալան լեռը համարվել է այս սահմանագիծը, որից հյուսիս Արմինիա // Հայաստանն էր, իսկ հարավ՝ Աղքեցան // Աստրապատականը: Ուրեմն, այս լեռից (համանուն գագառով և լեռնաշղայով) հյուսիս գտնված «Աշխարհացոյցի Պարապատունիքը և շրջակայքը հետավոր ժամանակներում ևս մասն են կազմել Հայաստանի»: Յակուտ ալ-Համալին Հայաստանին անդրադառնալիս գրում է. «Արմինիա է կոչված Նոյի որդի, Հարերի որդի, Ավմարի որդի, Լանքայի որդի՝ Արմինից: Նա էր, որ առաջին անգամ եկավ այնտեղ ու բնակություն հաստատեց»:<sup>25</sup> Հստ երևույթին, այս Արմինիի (ստրառնյան Արմենով) անունով է Խուդայիերինի կամքջի կրայով դեսի Անար, ապա և ժավկիզ ու Արդարի տանող ճանապարհի դժվարին լեռնային հատվածը կոչվել Արմինիյան անցք (Arminian):<sup>26</sup> Այս տարածքների վաղնջական ժամանակներից հայաբնակ լինելու մասին են խոսում նաև արար ճատենագիրների այն հաղորդումները, ըստ որոնց, Արմինի // Արմանի որդիներն են եղել հիմնադիր-անվանադիրները տեղական ամենամեծ բնակավայրերի: Յակուտ ալ-Համալին գրում է. 1. «Արդարի... Ասում են թե քաղաքի առաջին կառուցողը եղավ Պերոզ քաղաքորը, իսկ Արու Սայիդն ասում է, թե հավանաբար այդ քաղաքն իր անունն առել է Յունանի որդի, Լանքայի որդի, Արմինիի որդի՝ Արդարիյց»,<sup>27</sup> 2. «Բայյական... ոմանք ասում են, թե կազմում է Սեծ Արմինիայի մասը և գտնվում է Շիրվանի կողմերը: Նրա հիմնադրողը եղավ Կավառ քաջավորը Արմինիային տիրելուց առաջ: Ոմանք էլ ասում են, թե նրա հիմնադրողն է եղել Յունանի որդի, Լանտայի որդի, Արմանի արդի Բայյականը»:<sup>28</sup>

Պարապատունիքը ներառած հիշյալ տարածքի Հայոց քաջավորության կազմում ունեցած կարգավիճակի մասին պատկերացում է տախա Մովսես Խորեմացու «Հայոց պատմություն» թ գրիք գլխի հետևյալ հատվածը. Վաղարշակ քաջավորը «արևելյան կողմից, հայերեն խոսակցության վերջի սահմաններում երկու կողմնակալ է նշանակում մի-մի բյուր մարդով, նահապետական տների ցեղերից, Սիսակյաններին և Կադմոսի սերունդներից...»: Պատմանահոր հաղորդման շարտնակությունից պարզվում է, որ Սիսակյաններին հանձված կողմնակալությունը ընդգրկել է Արաքսի ստորին հոսանքից հյուսիս ընկած դաշտավայրը՝ Կոր գետի աջափնյակը («Աշխարհացոյցի» Ուրեմն, Երկրորդ կողմնակալությունը՝ Կադմոսի սերունդների կառավարմանն հանճնակածը, գտնվելու էր առաջինից հարավ և ընդգրկելու էր Արաքսի աջափնյակը՝ Պարսպատունիքը ներառյալ:

<sup>22</sup> Մու կ ս ես և Խո ր ե ն ա ց ի, Հայոց պատմություն, աշխարհաբար քարզմ. և մեկնարանությունները Ստ. Սալիսասանի, Եր., 1981, Ա, Ժ, էջ 51, Բ, ը, էջ 127-129 (այսուհետև՝ Խորեմացի):

<sup>23</sup> Նոյն տեղում, Բ, դ, էջ 119, Բ, ը, էջ 127:

<sup>24</sup> Ա ճ ճ ա թ ի ա լ Բ ա կ ս ի լ, Կատա տալհիս ալ-ասար վա ալ-կայս ալ-Մալիկ ալ Կախք. Տեքտ, պարունակած պատմությունների մեջ, 1971, տպ. 61.

<sup>25</sup> Արաքսական աղբյուրները՝ Հայաստանի և հարևան Երկրների մասին, կազմեց Հ. Նայրանդյան, Եր., 1965, էջ 16; Ա. Ի. Տեր-Գևորգյան, Արմենիա և Արաբական կալիֆատ, Եր., 1977, տպ. 258.

<sup>26</sup> Ս. Ե ր ե մ յ ա ն, ճշվ. աշխ., էջ 50, 72, 80:

<sup>27</sup> Արաքսական աղբյուրները . . . , էջ 13-14:

<sup>28</sup> Նոյն տեղում, էջ 40:

Ինչպես պարզվում է Խորենացու հաղորդումից, Կարմյանների կառավարմամբ այստեղ գոյություն է ունեցել դեռևս մակերոնացի նվաճողների հակառակրոյդ Վաղարշակի (Օրոնտես // Երվանդի)<sup>29</sup> օրոք հիմնադրված կողմնակալություն: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ Ս. Պետրոսյանը ստուգարանել է «Պարսպատունիք» գավառանունը որպես նախարարական տոհմանվան վերածված տիտղոս (հմնտ. *Ասպետունիք, Սաղխազունիք, Սարդպետ*), որն հետագայում է դարձել գավառանուն (հմնտ. *Բզնունիք, Ապահունիք, Երուանդունիք*): Ընդ որում, տոհմանվան հիմքում ընկած պարսպատ բառը նա համարում է ծագումով իրանական և համարժեքը կողմնակալ բառի. իրան.րաս «կողմ» + pati «ախտ»:<sup>30</sup> «Արևելյան դռան» նախարարությունների շարքում Զորանամակը հիշատակում է «Պատսպարտնի (<\*Պարսպատ-ունի> նախարարությունը, որի տոհմանվան և «Պարսպատունիք» գավառի անվան կապին անդրադեմ էր Ն. Արքունցը»:<sup>31</sup> Պատսպարտնի // «Պարսպատունիք» նախարարության տոհմանվան գավառ Պարսպատունիքը գտնվում էր Արաքսի աջ (հարավային) ափին և ընդգրկում էր այժմյան Իրանի Միահ-քուն // «Ղարա-դադ լեռնային շրջանը»:<sup>32</sup>

Տեսանք, որ Կիրսիլոս Փարսպարացին և Մելիքոս Լարիսացին արևելյան այս կողմնակալությունը՝ «Պարսպատունիքը ներառյալ, կոչում էին «մինչև Կալախենե»: Հայտնի է, որ իմ հույնները օտար տեղանունները հաճախ տառադարձում էին իրենց -ենե տեղանվանակերտի հավելումով: Գավառանվան տեղական ձևը լինելու էր \*Կալախւրաղկացած \*կալ-արմատից և -ախ տեղանվանակերտ վերջածանցից: Վերջինս առկա է նաև Հայաստանի ուրիշ մի շարք տեղանուններում. հմնտ. *Արց-ախ, Քաշ-ախ, Կարծախ* և այն: Իսկ արմատը, Ս. Պետրոսյանի կարծիքով, առկա է նաև Պարսպատունիքին հարավից և արևելից հարող ներկայիս «Ղարասու» գետի ավազանում նույն այս գետի հին «Քաղանուող», անվան մեջ:<sup>33</sup> Վերջին բաղադրիչը՝ իրանական լեզուների բնի «գետ»քառը, հետագային հավելում է, իսկ առաջինը պարունակում է հ.-ե. նախալեզվից եկող \*kāl- արմատը և -ān- վերջածանցը: Հնդկալպական արմատը ունի «սև, մրին», «կելոտոս» նշանակությունը՝ գետանվանը տարրվ «սև գետ» իմաստը, որը պարունակում է նաև գետի ներկայիս բնը. «Ղարասու (<ղարա «սև» + սու «ջուր») անունը»:<sup>34</sup> Քանի որ «մինչև Կալախենե» տարածքում է գտնվում ներկայիս Միահ-քուն//«Ղարա-աղ, այսինքն» «Սև լեռ» կոչված լեռնային շրջանը, իսկ Կալախենենում «Քաղան-ոուող» // «Ղարասու», այսինքն՝ «Սև գետ», «Սև ջուր» կոչված գետը, ապա Կալախենե-ի «սև տեղ, սև վայր» ստուգարանությունը դառնում է հիմնավոր, իսկ «մինչև Կալախենե» ճգված տարածքը լինելու է «Պարսպատունիքը՝ Կաղմյանների գլխավորած կողմնակալությունը»:

Ինչպես գիտենք, Ստրաբոնը Ակիլիսենեից հետո և Կալախենեից ու Աղիարենեից առաջ հիշատակում էր Սյուսպիրիտիսը: Եթե Ակիլիսենեի հակադիրը «մինչև Կալախենե» ճգված տարածքն էր, ապա «մինչև Աղիարենե» ճգված երկրամասի հակադիրն էլ լինելու էր Սյուսպիրիտիսը, որն, այսպիսով, գտնվելու էր Մեծ Հայքի հյուսիսարևմտարքում՝ ճորոխի ավազանում: Սյուսպիրիտիսը մեկ անգամ ևս հիշատակված ենք գտնվում Ստրաբոնի աշխատության այն հատվածում, որտեղ խոսվում էր նրա ուկու հանքերի մասին. «Կան ուկու հանքեր Սիսպիրիտիսի մեջ՝ Կարպալլայում»:<sup>35</sup> Անդրադառնարք Սյուսպիրիտիսի տեղադրության հարցին՝ Ն. Արքունը նախապես այն որոնում էր ճորոխ գետի ավազանում, նույնացնելով հետագա Սակեր գավառի հետ և այստեղ տեղադրելով Կարպալյայի ուկեհանքը:<sup>36</sup> Ավելի ուշ նաև փոխեց սրանց տեղա-

<sup>29</sup> Լ. Պ ե տ ր ո ս յ ա ն, Ավանդական Վաղարշակի պատմական ու վիպական նախատիպերի շուրջ, ԳԱԱ ԸՆՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, 2002թ, էջ 136-142.

<sup>30</sup> Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն, «Ասպետ» տիտղոսի և «ասպետութիւն» գործակալության նախական բնույթի պարզաբնան փորձ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1983, թիվ 4, էջ 82-84:

<sup>31</sup> Հ. Ա դ օ հ պ, Աշվ. աշխ., էջ 256, 321:

<sup>32</sup> Ս. Ե ր ե մ յ ա ն, Աշվ. աշխ., էջ 77:

<sup>33</sup> Արաքսական աղբյուրները ..., էջ 103:

<sup>34</sup> Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն, Թրակա-կիմերական էթնիկական տարրը Արաքսի ստորին հոսանքի շրջանում, «Պատմա-բանափական հանդես», 1979, թիվ 1, էջ 195-196:

<sup>35</sup> Տ r a b o, XI, 14, 9, էջ 61.

<sup>36</sup> Հ. Ա ծ ո ն պ, Աշվ. աշխ., էջ 25, ծամ. 2:

դրույյան վերաբերյալ իր տեսակետը, գրելով. «Մխսպիրիտիսը ճորոխ գետի վրայի հայկական Սպեր չէ, քանի որ այն հիշատակվում է Կալաքենեի և Աղիարենեի հետ, աետը է ենթադրել, որ դա Բատման գետի լեռնային շրջանի Շուպրիան է»:<sup>37</sup> Այս առքի նկատենք, որ Սյուսպիրիտիսը հիշատակվում է ոչ միայն Կալախենեի ու Աղիարենեի, այլև Ակիլիսինեի հետ: Բացի դրանից, Բատման գետի լեռնագավառը՝ Սասունը, ավելի հեռու է Աղիարենեից, քան Ակիլիսինեից:

Հ. Սանանյանի կարծիքով ևս Սյուսպիրիտիսը Շուպրիան է. «Ասորեստ. արձան. Տարի // Ծովուրիւր», - գրում է նա, չնայած հետո, Յ. Սարկվարտին հղելով և հիմք ընդունելով ձեռագրերից մեկի Հյուսպիրիտիս ձևը, այն համապատասխան է դնում Ըստնովնի հիշատակած Հետպերիս ցեղանվանը:<sup>38</sup> Բայց հայտնի է, որ հետադրիտները բնակվում էին ճորոխի ավազանում,<sup>39</sup> իսկ նրանց ցեղանունն ուղղակի կապի մեջ է Սպեր գավառանվան հետ<sup>40</sup> և ծագում է նրանից:<sup>41</sup> Ս. Երեմյանը ևս Սյուսպիրիտիսը նոյնական է համարում Շուպրիայի հետ,<sup>42</sup> երբ հայտնի է, որ Հայկական Տավրոսի այդ մասում նշանակոր ուկենանքեր չկան: Նա ինքը Հայատանի նշանակոր ուկենանքերն է համարում Փառանգիոնը և Բողոքը, իսկ դրանք գտնվում էին Սպերի հարևանությանը՝ Տայքում:<sup>43</sup>

Լեռն ինն Հայատանի ուկենանքերից առանձնացնում էր երեքը՝ Սպերում, Այրարատում և Չորրորդ Հայքի Պաղենատուն գավառում: Ընդ որում, առաջին տեղը տալիս էր Սպերին, ավելացնելով, որ այստեղի ուկենանքը «այնքան հայտնի էր, որ Ալեքսանդր Մակեդոնացին, ինչպես վկայում է Ստրաբոնը, նրան տիրելու համար մի գումարտակ զորք ուղարկեց՝ Մենոնի հրամանատարությամբ»:<sup>44</sup> Իսկ սա նշանակում է, որ Լեռն ստրաբոնյան Սյուսպիրիտիսը ուղղակի նոյնացնում է հետագա Սպերի հետ: Նոյն կարծիքն է նաև Հ. Աճառյանը, որը Սյուսպիրիտիսը համարում է «գավառ իր Հայատանի, որ է Սպեր»:<sup>45</sup> Իրականում ուկենանքը գտնվում է ոչ քե հետագա Սպերում, այլ նրա հարևանությամբ, իսկ սա նշանակում է, որ ստրաբոնյան Սյուսպիրիտիս ավելի ընդգրկուն անվանում է եղել, քան հետագա Սպերը: Ըստ այդմ, Սպերի ուկենանքը նոյնացնում են բյուզանդական աղբյուրներից մեկում հիշատակված մերձպարխարյան Փառանգիոնի հետ, որը տեղադրվում է Տայքի Արտեաց փոքր գավառում, այժմյան Զարվանքի տեղում կամ մնութեքում:<sup>46</sup>

Սյուսպիրիտիսի ճորոխի ավազանի մեծ մասը, մանավանդ նրա Պարխարյան (Արևելապնտական) լեռնաշղթային հարող շրջաններն ընդգրկած լինելու և Մեծ Հայքի ուազմավարչական միավորներից մեկը լինելու մասին են խոսում հայ և օտար պատմիչների վկայությունները: Քերենք դրանք. Վաղարշակ քաջակորի իրականացրած բարեկիոնումների մեջ Սովուս Խորենացին առանձնացնում է հետևյալը. «Որովհետև մակեդոնացիներին սանձահարելուց հետո, երբ պատերազմը դադարեց, քաջ Պարթևը ձեռնարկում է բարեկարգությունների, նախ և առաջ բարիքների փոխարենը հասուցանելով զորավար և իմաստուն Ծամբատ Բազարատին, որ իրեաներից էր, իշխանություն տալով նրան՝ որդոց-որդի քաջադիր լինել Արշակունիներին, (և սահմանելով) որ նրանից սերվող ցեղը Բազարատունի կոչվի նրա անունով..., իսկ (մեր երկրի) արևմտյան կողմում, որտեղ հայերեն լեզուն վերջանում է, նրան նշանակեց կողմնակալ, բյուրերի և

<sup>37</sup> Ն. Աղոնց, ճշվ. աշխ., էջ 325:

<sup>38</sup> Հ. Մա ն ա ն դ յ ա ն, ճշվ. աշխ., հ. I, էջ 92, ծան. 1:

<sup>39</sup> Խ ե ռ, Առան, VII, VIII, 25, Ըստնովն, Անարսախ, քարզմանությունը Մինոն Կրկյաշարյանի, Եր., 1970, էջ 197:

<sup>40</sup> Ք ս ե ն ո փ ո ն ն, Անարսախ, էջ 233:

<sup>41</sup> Ս. Պ ե տ ո ո ս յ ա ն, Հասազգիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդագրույցում, «Պատմա-քանակիրական համդեն», 1981, թիվ 3, էջ 195:

<sup>42</sup> Հայ ծողովրդի պատմություն, հ. I, էջ 245:

<sup>43</sup> Նոյն տեղում, հ. I, էջ 51:

<sup>44</sup> Լ ե ռ, Երկերի ծողովածու, հ. I, Եր., 1966, էջ 139:

<sup>45</sup> Ս ա ր ա բ ո ն, էջ 121:

<sup>46</sup> Պ ր կ ո պ ի ո պ ի ո ս Կ ե ս ա ր ա ց ի, քարզմանությունը բնագրից, առաջարան և ծանոթագրություններ Հրաշ Բարբիլյանի, Եր., 1967, էջ 41: Խ. Ածոնց, ճշվ. աշխ., էջ 25-26: Ս. Երեմյան, ճշվ. աշխ., էջ 40, 88:

հազարների իշխան»:<sup>47</sup> Անանուն պատմիչը (Սերենո) Շամբատ Բազարատին կոչելով Բազարատ Փառագեան, իսկ Վաղարշակ թագավորին Արշակ (հմնտ. Վաղ-արշակ և Արշակ)<sup>48</sup> նույն այս առիթով զում է. «Սրան Արշակ արքան արեց Հայաստան երկրի ասպետ, որ է իշխան և հրամանատար, ամենայն թագավորության հրամանաց գլուխ, այլև հայր արքայի և եղբայր»:<sup>49</sup>

Ինչպես տեսնում ենք, Սովորե Խորենացին Բազարատին կողմնակալ, բյուրերի և հազարների իշխան է համարում մեր երկրի «արևմտյան կողմում, որտեղ հայերեն լեզուն վերջանում է», իսկ Անանուն պատմիչը նրան կոչում է «ասպետ, որ է իշխան և հրամանատար»: Հայտնի է, որ Բազրատունի ասպետների գործակալական տիրույթը՝ «ձեռական իշխանության երկիրը», Սպեր գավառն էր և Բազրատունի նախարարական տոնինի հենց այս տեղի ճյուղն էր կոչվում Ասպետունի և Ասպետյան (հուն.՝ Ասուտաւանան):<sup>50</sup> Ս. Պետրոսյանը ուշադրություն է դարձրել այն հանգամանքի վրա, որ երեւ Ս. Խորենացին Բազրատունիների նախնի Բազրատ ասպետին համարում է կողմնակալ «արևմտյան կողմում, որտեղ հայերեն լեզուն վերջանում է», ապա Ազարանգեղոսը «ասպետության իշխանության հատկացնում է Մեծ Հայքի հյուսիսային և հյուսիս-արևմտյան կողմները և նրա գործն է համարում երկրի Կովկասյան և Արևելապոնտական սահմանների պաշտպանությունը»:<sup>51</sup> Ազարանգեղոսի հունարեն «Վարքը» Գրիգոր Լուսավորչին Կոսարիա ուղեկցած հայ մեծատոնիներին թվարկում է հետևյալ հերթականությամբ. «Առաջին տեղում գտնվող Անգեղտան և Անձիտի կուսակարը, երկրորդ՝ Աղձնիտի մեծ բրեշխը, երրորդ՝ Մարդերի կուսակարը, չորրորդ՝ ասպետության իշխանը, որը պաշտպանում էր Կովկասյան լեռների կողմերը և Ծամիքը, ինգերորդ՝ Սամիկոնյանների նախարարը, սպարապետը...»:<sup>52</sup>

Ազարանգեղոսի հունարեն «Վարքի» այս տեղեկությունը համահունչ է Դիոն Կասփոսի այն վկայությանը, որը վերաբերում է 163թ. Հայաստան ներխուժած հոլովացիների դեմ մեր ժողովրդի մղած պայքարի մի դրվագին: Հայերի դիմադրությունը ճնշվել էր, բայց Մարկոս Ավրելիոս կայսրը իրավիճակի հետազոտ սրման չգնալու նպատակով համամետարար մեղմ վարվեց նրա կազմակերպիչների հետ: Ըստ Դիոնի. «Տրդատ սատրապին, որը Հայաստանում խռովություն էր առաջ բերել և սպանել էր հենիոխների քաջավորին ու նաև սուրբ հանել էր՝ սպառնալով Վերոսին (կայսեր գահակից եղբորը-Լ.Պ.), որն այդ բանի համար նրան հանդիմանել էր, Մարկոս Ավրելիոսը փոխանակ սպանել տալու, արսուց Քրիստոնա»:<sup>53</sup> Ս. Երեմյանը ցույց է տվել, որ Տրդատ սատրապը Ս. Խորենացու հիշատակած Տրդատ Բազրատունին է,<sup>54</sup> իսկ նրա կողմից սպանված անձը «Մարելոնների և Հենիոքների քաջավորության» արքային էր, որի քաջավորությունը գտնվում էր Պարիսարյան լեռների հյուսիսային լանջերին և հարևան էր ինչպես Սպերին, <sup>55</sup> այնպես էլ Տայքին:<sup>56</sup>

Հայ և օտար վերոհիշյալ պատմիչների վկայությունը և Բազրատունիների գործակալական տիրույթը Սպեր գավառի Մեծ Հայքի հյուսիս-արևմտյան մասում գտնվելու իրողությունը մեզ իրավունք է տալիս եղրակացնելու, որ ճորոխի ավազանի Պարխարյան լեռնաշղթային հարող շրջաններում գոյություն է ունեցել ուազմավարչական մի միավոր, որի գորավար-կառավարիչը լինում էր Բազրատունի տոհմից և կոչվում էր կողմնակալ, ասպետ, ասպետության իշխան, սատրապ: Ուազմավարչական այդ միա-

<sup>47</sup> Խ ո ր ե ն ա ց ի, Բ, գ, էջ 117:

<sup>48</sup> Լ. Պ ե տ ր ո ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 136-142:

<sup>49</sup> Սերենոսի նախակոպոսի պատմութիւն, Եր., 1939, գլ.Բ, էջ 10:

<sup>50</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. Ի, էջ 785, 831:

<sup>51</sup> Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն, «Ասպետ», տիտղոսի..., էջ 79:

<sup>52</sup> Ազարանգեղոսի Պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք),

թարգմանությունը հունարեն քնազդից Հ. Բարբիկյանի, առաջարան և ծանոթագրություններ Ա. Տեր-Ղևոնյանի, «Էջմիածին», 1966, թիվ Թ-Ծ, էջ 45:

<sup>53</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. Ի, էջ 785:

<sup>54</sup> Խ ո ր ե ն ա ց ի, Բ, կց, էջ 235-237:

<sup>55</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. Ի, էջ 785:

<sup>56</sup> «Հայաստանը մ. թ. 66 - մ. թ. 224 թվականներին» քարտեզը, (տես Հայ ժողովրդի պատմություն, հ. Ի):

վորի առաջին գրքավար-կառավարիչը եղել է Բագրատունի նախարարական տոհմի հիմնադիր Բագրատուր (ըստ Խորենացու՝ Շամբատ Բագրատատ, ըստ Անանուն պատմիչի՝ Բագրատ Փառազյան), որը Վաղարշակ արքայից կողմնակալ էր նշանակված Մեծ Հայքի այս կողմում: Կողմնակալ տերմինի դիմաց, ինչպես տեսանք, Դիմոր թերում է նրան համարժեք աքեմենյան դարաշրջանից եկեղ սատրապ-ը: Ընդ որում հեղենիզմի դարաշրջանում սատրապ-ը երբեմն գործածվում էր որպես սարատեզոս-ի համարժեք, երբեմն էլ Վերջինս գործածվում էր սատրապից ավելի ցածր պաշտոնյա նշելու համար: Այդպես էր, օրինակ, Սելևկյան պետությունում:<sup>57</sup> Այսուհանդերձ, այս պետությունում սատրապը թագավորի նշանակած և նահանգի քաղաքացիական ու ռազմական իշխանությունն իր ձեռքն առած պաշտոնյա էր,<sup>58</sup> այսինքն՝ գրքավար-կառավարիչ էր: Ուրեմն, Հռոմի դեմ պայքար կազմակերպած Տրդատի սատրապ լինելու հանգամանքը արդեն խստում է այն մասին, որ նա եղել է կողմնակալը նորիփի ավազանում գտնվող ռազմակարչական միավորի՝ օժտված ինչպես ռազմական, այնպես էլ վարչական գործառույթներով:

Այսպիսով, կասկած լինել չի կարող, որ Մեծ Հայքի հյուսիս-արևմտստրում գոյություն ունեցած ռազմակարչական միավորը ստեղծվել էր խորենացիական Վաղարշակ արքայի (այսինքն՝ անկախացած Մեծ Հայքի նախկին սատրապ Օրոնտես//Երվանդի) կողմից, ընդգրկել էր նորիփի ավազանի մեծ մասը և նպատակ է ունեցել պաշտպանելու «Կովկասյան լուսների կողմերը և ճանիքը» (ըստ Ազարանգեղոսի հունարեն «Կարծի»): Ուրեմն այն սահմանակցել է Վիրքին (Իրերիա), Կոտրիսին (Կոլխիդա), ճանիքին (Խաղութիք) և ընդգրկել էր «Աշխարհացույցի» Սպերը, Տայքը և արևմտյան Գուգարքը: Բագրատունի ասպետների կառավարմանը հանձնված ռազմակարչական այս միավորն է, որ հիմ հույներին հայտնի է եղել *Այուսպիրիտիս*(Սոստիրտիչ) անունով:

Ամփոփելով, նշենք, որ Ակերսանոր Մակեդոնացու ուղեկիցներ Կիրսիոս Փարսպացու և Մելիոս Լարիսացու հաղորդումը Արմենոսի և «նրա հետ եղողների» զրադեցրած տարածքների մասին պատմական հենք ունի և նշում է Օրոնտես // Երվանդի հիմնադրած Երվանդունիների թագավորության հակադիր երկրամասերը՝ Ակիլիսնենն (արևմտստրում), Սյուսպիրիտիսը (հյուսիս-արևմտստրում), «մինչև Կալախենե» ձգված տարածքը (արևելքում) և «մինչև Արիարենե» ձգված երկրամասը (հարավ-արևելքում):

## О ЧЕТЫРЕХ ОКРАИНАХ ЕРВАНДИДСКОЙ ВЕЛИКОЙ АРМЕНИИ

(конец IV в. до н. э.)

*Резюме*

*Л. Петросян*

После разгрома ахеменидской армии войсками Александра Македонского при Гавгамелах (331 г. до н. э.), сатрап Великой Армении Ерванд (Оронт) вернулся на Родину, а потом провозгласил себя царем всей Армении. На основании сохранившихся в §Географии Страбона данных (XI, 4,9; XI, 14,12) можно заключить, что в состав его царства входили большинство армянских земель. Тогдашняя Великая Армения включала: на западе область Акилисена (охватывавшей всю территорию Екелика и сопредельных гаваров), на востоке ё область до Калахены (бассейн реки Карасу в современном Иранском Азербайджане), на северо-западе область Сиспиритца (Спер с месторождением золотых копей Тайка), а на юго-востоке ё область до Адиабены (район города Арбелы в Месопотамии).

<sup>57</sup> Э. Бикерман, *Государство Селевкидов*, М., 1985, стр. 184-186.

<sup>58</sup> Նոյն տեղում, էջ 190-191: